



# Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒԻՏԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

(ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ)



ազար հինգ հարյուր տարիներ մեզ բաժանում են Ղևոնդյանց և Վարդանանց հերոսական ծանր օրերից, մոռյալ ժամանակներից, բայց երբեք չեն թառամել հայ հավատի այդ փառքի նահատակների և Հայրենիքի անձնուրաց մարտիկների յուսապայծառ անունն ու խրեկելի հիշատակը հայ հոգիների անդաստանի մեջ, որ հայոց պատմությունն է:

Ղևոնդյանք և Վարդանանք «վասն Յիսուսի» և «վասն հայրենեաց» մղված հերոսական պայքարի ոգեշնչողներն ու կազմակերպիչներն էին, որոնք 451 թվականի մայիսին Ավարայրի դաշտում ղեկավարեցին հավատի և հայրենասիրության դյուցազնամարտը, բռնության և խավարի ուժերի դեմ:

Ավարայրի հակատամարտը անցյալում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պանծալի բարձունքն է, հերոսական արտանայտությունը Հայ Ազգի բարոյական բարձր եկարագրի, հայրենասիրության, եկեղեցական ուխտապահության:

Ղևոնդյանք, նահատակ հոգևորականների այդ յուսե փառանգը, Հայ Եկեղեցու պարծանք սրբերն են և «սխոյեան Եկեղեցոյ», որոնք երջանիկ արիությամբ «հեղին գարիւնս իւրեանց ի նորոգումն Եկեղեցոյ», և նրանց անձնուրաց նահատակությամբ «Եկեղեցիքի Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան»: Նրանք փորձության ժամին մնացին արի, առկուն, անկաշառ՝ դավերի և

փառքի խայծերի առաջ, որովհետև ջանակիրներն էին ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ և զինակիրները ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ:

Նրանք գոհեցին ամեն ինչ՝ եկեղեցական ուխտապահության և հայրենասիրության նվիրական գործի համար:

Իսկ Վարդանանց պատերազմի արգասիքը հանդիսացավ հայության գոյության հավերժացումը, որպես ուրույն Ազգ և Եկեղեցի: Վարդանանք, Ավարայրում իրենց հերոսությամբ, մանվան դեմ խիզախումով և «օգնականութեամբն Աստուծոյ» այնպիսի գործ կատարեցին, որի «համբան պատմեցի յափտեան», որպես հայոց պատմության «ազգապանծ և հոգեզմայլ մի էջը»:

Հայ ժողովրդի սրտում Ղևոնդյանց և Վարդանանց ՈԳԻՆ անմեռ է մնացել: Վարդանանց և Ղևոնդյանց տոնը հայ մարդու սրտին խոսող ազգային մեծագույն տոնն է: Վարդանանք և Ղևոնդյանք հավատավոր, անձնուրաց, Հայրենիքի սիրով և Ավետարանի կենդանի հոգով առյժմած սուրբեր եղան և մնացին այդպիսիք ընդմիշտ մեր ժողովրդի ազգային զգացմունքների առաջ: Նրանք հայության բյուրեղացած եկարագրի շքեղ առտանայտությունն էին, որոնք միասիրտ հանձնառությամբ կոնցրին եկեղեցական ուխտապահության սրբազան ուխտը՝ «ուխտ հաւատոց մերոց», և ցանկացան Ավետարանի ոգով ու Հայրենիքի շնչով կենդանի պահել ՀԱՅՈՒԹՅԱՆԸ և այդ սուրբ նպատակի իրա-

գործման համար, սիրահոծար հանձն առին  
 ԼԵՃԱՆՏՐԱՐՈՒՄՆԵՐԸ: Ով ուխտագնացու-  
 րյամբ բաժանվում էր այդ համագրային  
 միաբանությունից, այդպիսին դասվում էր  
 մասնիչ Հուլայի կարգը:

Եկեղեցական ուխտապահությունն ու հայ-  
 բնասիրությունը իրար էր բերել, միացել  
 բոլորին, դարձել մի սիրտ ու մի հոգի,  
 պատրաստ սուրբ գործի համար «ի մեռանել  
 և ի սպանանել»: Տերն ու ծառան, ազնվա-  
 կանն ու գեղուկը, նախարարն ու հոգևորա-  
 կանը, այր թե կին, բոլորը լցվել էին հավա-  
 սարապես արիական ոգով, և սպառազին-  
 ված՝ ֆրիստոնեական հավատով. «Ֆաշու-  
 րեամբ միայն մեռցում... բայց միայն յա-  
 րուրիսն ֆաշուրեան վատուրիսն մի՛ խառ-  
 նեցում»: Ու բոլոր կովեցիկն ֆաշուրյամբ,  
 անհանաչ արիությամբ, որպեսզի «ԲԱՐՁ-  
 ՐԱՍՅԻ ԿՈՂՄԵ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻ՛  
 ՔԱԿՏԵՍՅԻ ՈՒԽՏՆ ԸԱՒԱՏՈՑ ՄԵՐՈՑ»:

Ղևոնդյանց և Վարդանանց նահատակու-  
 րյամբ պայծառացավ եկեղեցիկն, կոփվեց  
 եկեղեցական ուխտապահությունը և փառա-  
 վորվեց Հայրենի հողը:

Երանկ իրենց մարտիրոսությամբ արժա-  
 նացան ոչ միայն նահատակության անթա-  
 ոամ պսակին, այլ նաև անշինչ ու հավիտե-  
 նական հիշատակ բողոքի ապագա հայ սե-  
 բունդների սրտում:

Եվ հետագա դարերում, երբ օտարները  
 սուր բարձրացրին մեր եկեղեցու և Հայրե-  
 նիքի անկախության վրա, Ղևոնդյանց և  
 Վարդանանց եկեղեցական ուխտապահու-  
 րյան և հայրենասիրության ոգին նորից առ-  
 ֆի հանեց հայ սերունդներին: Այդ ոգին այդ-  
 պես հավերժացավ հայոց պատմության է-  
 շերում ու դարձավ անխորտակելի վեմը մեր  
 ժողովրդի գոյության:

Այսօր, երբ մի անգամ ևս սիրով և երախ-  
 տագիտությամբ ոգեկոչում ենք խնկելի հի-  
 շատակը Ղևոնդյանց և Վարդանանց նահա-  
 տակների, արդարորեն ոգեշնչվում՝ նրանց  
 սուրբ գործով, միաժամանակ ապրում ենք  
 խորունկ վիշաք Սփյուտֆի մեր ազգային-ե-  
 կեղեցական կյանքի այն տխուր և խորթ երե-  
 վույթների, որոնք ընդհանուր ոչինչ չունեն  
 ԼԵՃԱՆՏՐԱՐՈՒՄՆԵՐ ԵՎԵՂԵՑԱԿԱՆ ՈՒԽՏԱՊԱՀՈՒ-  
 ՄՆԵՐ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԸՆԴՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻ՛  
 ՔԱԿՏԵՍՅԻ ՈՒԽՏՆ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՀԵՏ:

Բավական չէ սուրբ պատարագով, հան-  
 դեսներով, խնկով ու աղոթքով ոգեկոչել հի-  
 շատակը Ղևոնդյանց և Վարդանանց: Էակա-  
 կը այն է, որ ԱՊՐԵՆՔ ԵՎ ԳՈՐՄԵՆՔ նրանց  
 ոգով, գնանք նրանց նահապարհով: Սակայն  
 դժբախտաբար միշտ չէ, որ այդ հաջողվում  
 է: Հանախ մոռանում ենք մեր մեծ նահա-  
 պակներին: ՇԸԹՆՆՐՈՎ հարգում և մեծարում  
 ենք նրանց հիշատակը, իսկ ԳՈՐՄՈՎ ֆան-

դում ենք նրանց. նահատակությամբ զնով  
 ձեռք բերված և կոփված եկեղեցական ուխ-  
 տապահությունը, ազգային միասնականու-  
 թյունը:

Վերջին երկու տարիների ընթացքում հրա-  
 պարակ են իջել Սփյուտում մի շարք ուղե-  
 կորույսներ, որոնք հատվածական և անձեա-  
 կան ենդ շահերից առաջնորդված, փորձում  
 են ֆակտել սրբազան «ուխտն հաւատոց  
 մերոց», որի պաշտպանության համար ա-  
 րյուն բափեցին Ղևոնդյանք և Վարդանանք:

Ցավ ի սիրտ, այստեղ պետք է արձանա-  
 գրել, որ եկեղեցական ուխտապահության  
 դեմ դավանաբողոքների առաջին շարքումն է  
 նաև մի հոգևորական, Կոստանդնուպոլսի  
 ծերունագարդ պատրիարքի դիպուկ բնութա-  
 գրումով՝ «դավի ընկեր» և հայ հոգևորակա-  
 նության շարքում «ևս մամ» Խորեն եպիս-  
 կոպոս Բարոյանը, մեր օրերի Չանգակ երե-  
 ցը, «ժանա սերմ և անօրէնութեան որդի»,  
 որը «դրժելով իր ուխտին և կրօնական կո-  
 չումին, կուսակցական փոքոցով կհրահեր եղ-  
 բայրատեցությունը եկեղեցիկն ներս»:

Այս օրերին նա, Ղևոնդյանց և Վարդանանց  
 նահատակության նահապարհի վրա, արհա-  
 մարհելով նրանց սուրբ հիշատակը և «դար-  
 ձած կամավոր կույր և անատակ՝ գտնելու  
 նշմարության նահապարհը» (Ղևոնդ երեց),  
 փորձում է իրեն նման այլ ուղեկորույսների  
 հետ ֆակտել Թեհրանի, Սպահանի, Թավրի-  
 զի հայ հավատացյալ և հայրենասեր ժողո-  
 վրդի ուխտի և հավատի միասնականությու-  
 նը, հակառակ իրանահայ հոգևորականու-  
 րյան ուխտապահության և համայն հայ ժո-  
 ղովրդի կամքին, ֆարգելով «զխաւարային  
 խորհուրդս մուրեկոցն»:

Ղևոնդյանք և Վարդանանք Պարսկաստա-  
 նում աֆսոսի նահապարհը անցան շրթայա-  
 կապ, բոկոտն, բայց արի, վնասկան ու հա-  
 վատարիմ «ուխտին հաւատոց հարցն մերոց  
 և Աւետարանին»: Բարոյան եպիսկոպոսը,  
 նահատակության այդ արյունոտ նույն նա-  
 հապարհի վրա, նահատակների արյան  
 հետքերի վրա պտտեցնում է իր այլանդակ  
 սովերը որպես «նաղթական»-ի, եկեղեցա-  
 կան ուխտապահությունը ֆակտել փորձողի  
 տխուր, անփառունակ դերի մեջ, երեսուն  
 արծաթի վարձով: Վաղուց նա նախանձի  
 անօրեն ոգին դատարկվել է Ղևոնդյանց ա-  
 ռաֆիկությունից և Վարդանանց հավատից,  
 դարձել «մահվան դեղագործ և բոլոր տկա-  
 րամիտների հոգիների կորստյան մատովակ»  
 (Ղևոնդ երեց):

Վեհափառ Հայրապետը, 1959 թվականի Ս.  
 Մենդյան Իր պատգամի մեջ, Իր հայրական  
 օրհնությունը տալով նաև Վարդանանց և Ղև-

վոնդյանց ուխտին և ոգուն հավատարիմ  
Իրանի հավատացյալ և հայրենասեր Իր գա-  
վակներին, գրում էր.

«Եվ, Սիրելի՛ ՊԱՐՍԿԱՆՆԵՐ, ՄԱՆԱՎԱՆԳ  
ԴՈՒՔ, ՀԱՎԱՏԱՎՈՐ ԵՎ ՔԱԶԱՐԻ ՈՐԴԻՔ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ, ՈՐ ԴԱՐԵՐԻ Ի ՎԵՐ  
ԿԱՊՐԻՔ ՄԵՐ ԴՐԱՅԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ԻՐԱՆԻ  
ՄԵՋ, ՁԵՋ ԲՈՂՈՐԻԳ ԿՈՋ ԿԸՆԵՆՔ՝ Ս. ԷՋ-  
ՄԻԱՇՆՈՎ ՄԻԱՑԵՔ ԵՎ ԶՈՐԱՑԵՔ, ԵՎ  
ԹՈՒՅԼ ՄԻ՛ ՏԱՔ, ՈՐ ՁԵՋ ՀԱՓՇՏԱԿԵՆ ԱՆ-  
ՀԱՐԱԶԱՏ ՁԵՌՔԵՐ:

ԱՅԴ ԱՆՀԱՐԱԶԱՏ ՁԵՌՔԵՐԸ ԿՓՈՐՁԵՆ  
ԱՆՋԱՏԵԼ ՁԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ-  
Ս. ԷՋՄԻԱՇՆԵՆ, ԹԵՀՐԱՆԻ, ԹԱՎՐԻՉԻ ԵՎ  
ՍՊԱՀԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՀԱ-  
ԿԱԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ, ԵՎ ԿԿԱ-  
ՄԵՆԱՆ ՁԵՋ ՄԻԱՑՆԵԼ ԱՅԼ ԿԵԴՐՈՆԻ, ՈՐ  
ԱՎԱԶԻ ՎՐԱ Է ՀԻՄՆՎԱՍ, ԵՎ ՈՐՈՒՆ ԱՆ-  
ԼՈՒՅՍ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԿՅԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԵ  
Է՛ ՔԱՆԴԵԼ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ  
ՍՐԲՈՅ ԱՍՏՎԱՏԱԿԱՌՈՒՅՑ ԷՋՄԻԱՇՆԻ ՀԻՄ-  
ՔԵՐԸ: ԱՅԴ ՉԱՐ ՈԳԻՆ ԹՈՂ ՀԵՌԱՆԱ ՁԵՐ  
ՍԱՀՄԱՆՆԵՐԵՆ, ԹՈՂ ՀԵՌԱՆԱ ՁԵՐ ԵԿԵՂԵՑԻ-  
ՆԵՐԵՆ, ՁԵՐ ՏՈՒՆԵՐԵՆ, ՈՐՊԵՍՁԻ ԴՈՒՔ  
ԳՏՆԵՔ ՁԵՐ ԿՅԱՆՔԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ Ս.  
ԷՋՄԻԱՇՆԻ ՍՈՒՐԲ ԶՈՐՈՒԹՅԱՄԲ»:

Աճեղ է գործընթացը Ս. Էջմիածնի և առ-  
հալածի՝ «ուխտն հաւատոց մերոց», որով-

հետև մեր եկեղեցական ուխտապահությունը  
«ոչ եթէ ընդ մարդոյ է... այլ անլուծութեամբ  
Աստուծոյ, որում շի՛ք հեար Բանդել և ի բաց  
ելանել ոչ այժմ, և ոչ յապա և ոչ յաւիտեանս  
և ոչ յաւիտենից յաւիտեան»:

Բարոյան եպիսկոպոսը և իր նմանները պի-  
տի տեսնեն մոխրաւալը իրենց սին երազ-  
ների: Մեր հավատացյալ և հայրենասեր ժո-  
ղովուրդը, հայ մամուլը, վճռական հակա-  
հարվածը տվել են նրանց: Հակառակ Բարո-  
յան եպիսկոպոսի և իր նմանների բունալից  
խորհուրդների, սատանայական ծրագրերի և  
զավաղությունների, մեր ժողովուրդը համա-  
խմբվել է Ս. Էջմիածնի և իր Հայրենիքի  
շուրջ, և չի ցանկանում լսել իրենց խիղճը  
վաճառած և հայրենադավ մոլորյալներին:

Ղևոնդյանց և Վարդանանց հաղթական  
դրոշը իր սուրբ և վստահելի ձեռքումն է պա-  
հում Հայաստանյայց Առաքելական Մայր Ե-  
կեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավո-  
րությամբ, որպես վեմը եկեղեցական ուխ-  
տապահության և օջախը հայրենասիրու-  
թյան:

Աղոթե՛ք, որ մեր սրտերում միշտ վառ  
մնան Ղևոնդյանց եկեղեցական ուխտապա-  
հությունը և Վարդանանց հայրենասիրական  
ոգին:

